ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» ՝ ՔՈՎԻԴ-19-ի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրի շրջանակներում բնապահպանական և կանաչ ձեռներեցությանն ուղղված դասընթացների վերաբերյալ

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում»ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ Կառավարության 15-րդ միջոցառմանը ուղղված ՔՈՎԻԴ-19-ի սոցիալական հետևանքների չեզոքացմանը և ապահովել դրա շարունակելիությունը ՀՀ Գեղարքունիքի մարզում: Աշխատանքներն համակարգում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, և ԳՄՀԸ-ն: Ծրագրին աջակցող տեղական գործընկերներն են «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը, «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» (ISSD) և «Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության հասարակական կազմակերպությունները:

Բնության պահպանման, գետերի ափամերձ տարածքների վերականգնման աշխատանքների շարունակականության ապահովման և «կանաչ» ձեռներեցության տարածման նպատակով ծրագրի շրջանակներում իրականացվելու է «կանաչ» դասընթացների շարք: Մանրամասները ներկայացված են ստորև.

Դասընթացի տևողությունը՝ 3 (երեք) օր, ընդհանուր 6 (վեց) ժամ (յուրաքանչյուր օր՝ (2) երկու ժամ)

- Դասընթացի անցկացման օրը, վայրը, ժամը՝ 02.06.21, ք. Գավառ 10:30, ք. Սևան 13:30
- Դասընթացի անցկացման օրը, վայրը, ժամը՝ 04.06.21, ք. Գավառ 10:30, ք. Սևան 13:30
- Դասընթացի անցկացման օրը, վայրը, ժամը՝ 08.05.21, ք. Գավառ 10:30, ք. Սևան 13:30

- Դասընթացի անցկացման օրը, վայրը, ժամը՝ 06.06.21, ք.Վարդենիս 10:30, ք. Մարտունի 13:30
- Դասընթացի անցկացման օրը, վայրը, ժամը՝ 09.06.21, ք. Վարդենիս 10:30, ք. Մարտունի 13:30
- Դասընթացի անցկացման օրը, վայրը, ժամը՝ 11.06.21, ք. Վարդենիս 10:30, ք. Մարտունի 13:30

Դասընթացի թեմաները՝

ՕՐ 1. Գետերի էկոհամակարգերի կարևորությունը Սևանա լճի պահպանության համատեքստում (իրականացնող՝ ԳՄՀԸ փորձագետ՝ Իվան Գաբրիելյան),

ՕՐ 2. Բնակավայրերի կանաչապատ տարածքների կարևորությունը և դրանց կառավարման առանձնահատկությունները Հայաստանում (իրականացնող՝ Բլեջան ՀԿ),

Օր 3. Թափոնները և դրանց կիրառումը (իրականացնող՝ «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» ՀԿ)

Դասընթացի երրորդ օրը մասնակիցները հնարավորություն կունենան ընտրելու վեց առաջարկվող դասընթացներից մեկը (նկատառում. **դասընթացի իրականացման համար յուրաքանչյուր խմբում պետք է լինեն առնվազն 7 մասնակից**), որոնք ներկայացված են ստորև: Դասընթացի այն մասնկացիները, ովքեր կցանկանան մասնակցել պրակտիկ աշխատանքերի դասընթացին (դասընթացներ 3 և 4), հնարավորություն կունենան ներկայացնել իրենց աշխատանքները փորձարարական ցուցահանդեսի ընթացքում:

Դասընթացների նկարագիր.

<u>Օր 1</u> Գետերի էկոհամակարգերի կարևորությունը Սևանա լճի պահպանության համատեքստում (իրականացնող՝ ԳՄՀԸ փորձագետ՝ Իվան Գաբրիելյան)

Դասընթացի արդյունքում մասնակիցները կստանան գիտելիքներ և տեղեկատվություն հետևյալ կետերի վերաբերյալ.

- Սևանա լճի ռազմավարական նշանակությունը և Սևանա լճի հիմնախնդիրները հատկապես Սևանա լիճ թափվող գետերի էկոհամակարգերի տեսանկյունից,
- գետերի էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված քայլերի նշանակության և կարևորության մասին (գետերի ափամերձ տարածքների մաքրում և ուռենիների տունկ),
- ինչպես է ուռենիների տունկը նպաստում գետերի ափամերձ տարածքների վերականգնմանը:

<u>Օր 2</u> Բնակավայրերի կանաչապատ տարածքների կարևորությունը և դրանց կառավարման առանձնահատկությունները Հայաստանում (իրականացնող՝ Բլեջան ՀԿ)

Դասընթացի արդյունքում մասնակիցները կստանան գիտելիքներ կանաչապատ տարածքների ստեղծման, պահպանության և կառավարման գործընթացների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Դասընթացը կներառի նաև հանրության մասնակցության և ակտիվ դերակատարության կարևորության, այդ թվում, նշված ոլորտում հանրային վերահսկողության մեխանիզմների կենսագործման վերաբերյալ թեմաներ:

<u>Օր 3.</u> մասնակիցը կարող է ընտրել նշված հինգ դասընթացներից որևէ մեկը

<u>Դասընթաց 1: Թափոնը որպես նոր եկամտի աղբյուր</u>

Դասընթացի նպատակն է մասնակիցներին սովորեցնել վերամշակվող թափոններին վերաբերվել որպես ռեսուրս, ոչ թե՝ աղբ: Մասնակիցները կծանոթանան վերամշակվող թափոններին, թափոնների հավաքման և սորտավորման ամենաարդյունավետ և անվտանգ կանոններին: Կներկայացվեն Հայաստանում թափոնների վերամշակմամբ զբաղվող գործարանների և արտադրամասերի կոնտակտներ, կտրամադրվի գնացուցակ թափոնների վաճառքի համար:

Արդյունքում մասնակիցները կունենան միանգամից երկու ձեռքբերում՝ ավելի մաքուր միջավայր և եկամուտ՝ առանց իրենց կողմից ներդրված ֆինանսի:

Դասընթաց 2: Թափոն նոր ապրանքի դիմաց

Դասընթացի նպատակն է մասնակիցներին ներկայացնել թափոնների հավաքագրման և սորտավորման կարևորությունը մի քանի տեսանկյուններից. փոքրացնել աղբավայր տեղափոխվող աղբի քանակը, ունենալ ավելի մաքուր շրջակա միջավայր, ձեռք բերել իրեր, որոնք կարող են օգտագործել կենցաղում կամ վաճառել տեղացի ձեռներեցներին:

Օրինակ, եթե մասնակիցն ունի ջերմոց կամ զբաղվում է մշակաբույսերի աճեցմամբ նա կկարողանա կրճատել իր ծախսերը՝ օգտագործելով փոխանակման արդյունքում ձեռք բերված տարաները: Եթե մասնակիցն անձամբ չունի փոխանակման արդյունքում ձեռք բերվող վերամշակված իրերի կարիքը, կարող է դրանք վաճառել նույն համայնքում ծաղիկների և բույսերի մշակումով զբաղվող անձանց:

Դասընթաց 3: Թափոնի նոր, ստեղծարար կյանքը

Դասընթացի մասնակիցներին վերապատրաստված մասնագետը կսովորեցնի ստանալ զարդեր, մանր աքսեսուարներ, դեկորի մասնիկներ, խաղալիքներ և այլ իրեր՝ օգտագործելով թափոնները (թուղթ, պլաստիկ, մետաղ) կամ վերօգտագործելով գործածությունից դուրս եկած իրեր (ձկնորսական ցանցեր, կոճակներ): Դասընթացը կարող է անցկացվել 2 տարիքային խմբի համար.

- Երեխաներ (մինչև 15 տարեկան)
- Չափահասներ (16 տարեկան և բարձր)

Պատրաստված իրերը կարող են վաճառվել օնլայն հարթակներում և այլուր:

Արդյունքում կունենանք մարդկանց խումբ, ով ձեռք է բերել լիովին նոր հմտություններ, հասկանում է, որ իրերի վերօգտագործումն ու վերամշակումը ոչ միայն նպաստում է ավելի կանաչ շրջակա միջավայր ունենալուն, այլև բերում է ֆինանսական եկամուտ:

Իրերի վաճառքից ստացվող գումարը կարող է ուղղվել համայնքում առկա խնդիրների լուծմանը:

Դասընթաց 4: Թափոնարվեստ

Դասընթացը նախատեսված է ստեղծագործական ջիղ ունեցող անձանց համար, ովքեր ունեն հետաքրքրվածություն և մտքեր ստեղծել արվեստի նմուշներ՝ օգտագործելով թափոնները:

Մասնակիցները կսովորեն ինչպես երկրորդ կյանք հաղորդել մարդու կենսագործունեության ընթացքում գոյացած թափոններին և գործածությունից դուրս եկած իրերին: Ստեղծված արվեստի նմուշները կարող են ցուցադրվել ստեղծվող բացօթյա ցուցահանդեսում: Այս նախաձեռնությունը ոչ միայն հնարավորություն կտա ստեղծագործող մարդկանց զբաղվել իրենց սիրած գործով, այլև կապահովի տուրիստական հոսք դեպի տվյալ համայնք, որն էլ իր հերթին կնպաստի համայնքի՝ հանրության կողմից ճանաչվածությանը և կապահովի եկամուտներ տեղում գործող բիզնեսներին:

Դասընթաց 5: Բնությունը ու դրա կարևորությունը. դասընթացավարների դասընթաց

Դասընթացի նպատակն է հետաքրքրված անձանց տալ էկոլոգիական խնդիրների, դրանց առաջացման մեջ թափոնների բացասական դերի, թափոնների ճիշտ կառավարման անհրաժեշտության և ավելի կանաչ շրջակա միջավայր ստեղծելու վերաբերյալ բազային գիտելիքներ: Մի շարք զարգացած և թափոնների կառավարման մեծ փորձ ունեցող երկրներում և Հայաստանում առկա խնդիրների միջև զուգահեռներ անցկացնելով՝ մասնակիցներին կտրվի թափոնների կառավարման մոդելի նախատիպ, որը հնարավոր կլինի հարմարեցնել տվյալ տարածաշրջանին և սկսել համայքի բնակչությանը բնապահպանական կրթություն տալ և սկսել թափոնների կառավարում՝ համայնքի ուժերով:

Թրեյնինգի մասնակիցները ձեռք կբերեն այնպիսի գիտելիքներ, որոնք կարող են փոխանցել համայնքի այլ բնակիչներին՝ իրենց կողմից նախաձեռնված և անցկացված բնապահպանական դասընթացների ընթացքում: Դասընթացները մեծապես կնպաստեն տվյալ համայնքներում հասարակության կրթական մակարդակի և բնապահպանական գիտակցության բարձրացմանը:

Դասընթաց 6: Բնությունն ու ես

Դասընթացի ընթացքում մասնակիցները կծանոթանան Հայաստանում և աշխարհում առկա հիմնական բնապահպանական խնդիրներին, դրանց բացասական ազդեցությանը, հնարավոր լուծումներին և այլն: Հատուկ ուշադրության կենտրոնում կլինի Սևանա լճի տարածքում առկա խնդիրների քննարկումը, կապված աղտոտվածության, կենդանական աշխարհի, ջրային ռեսուրսների ու էկոհամակարգերի վրա աղտոտվածության (մասնավորապես պլաստիկ թափոնների և միկրոպլաստիկի) ունեցած ազդեցության հետ: Մասնակիցներին կներկայացվի նաև զարգացած երկրներում կիրառվող լուծումների օրինակներ, որոնք կարող են ադապտավցել և իրականացվել նաև Հայաստանի տարածքում:

Դասընթացին գրանցվելու համար անհրաժեշտ է դիմել.

Վարդենիսի տարածաշրջանի համակարգող՝ Նարեկ Խաչատրյանին 094747771
Մարտունու տարածաշրջանի համակարգող՝ Եղիազար Դավթանին 093700245
Գավառի տարածաշրջանի համակարգող՝ Սոնա Մերթարչյանին 077586086
Սևանի տարածաշրջանի համակարգող՝ Մերի Մկրտչյանին 098900768
Ծրագրի համակարգող՝ Սիլվա Այվազյանին՝ 091816055